

Խնդիր

Ժամանակի սահմանափակում՝ 2 վայրկյան
Հիշողության սահմանափակում՝ 512 MB
Կշիռը՝ 100 միավոր

Շարադրանք

Այս խնդրի հեղինակը ալարկոտ է, այդ պատճառով խնդիրը հեքիաթ չունի: Տրված է N թիվը և M հատ չկարգավորված թվազույգ պարունակող S բազմությունը (չկարգավորված նշանակում է, որ (x, y) և (y, x) թվազույգերը համարվում են նույնը): S բազմության մեջ մտնող (x, y) թվազույգը բավարարում է $(1 \leq x \neq y \leq N)$ պայմանին: Ձեր խնդիրն է հաշվել այնպիսի (x, y, z) եռյակների քանակը, որոնք բավարարում են հետևյալ պայմաններին՝ $(1 \leq x < y < z \leq N)$, S բազմությունը չի պարունակում (x, y) , (x, z) , (y, z) թվազույգերից ոչ մեկը:

Մուտքային տվյալներ

Առաջին տողում տրված են երկու թվեր՝ N ($1 \leq N \leq 50\ 000$), M ($1 \leq M \leq \min(50\ 000, N*(N-1)/2)$): Հաջորդ M տողերից յուրաքանչյուրում տրված են երկուական թվեր՝ S բազմությանը պատկանող հերթական (x, y) թվազույգը ($1 \leq x \neq y \leq N$): Երաշխավորվում է, որ տրված թվազույգերը չեն համընկնում (չկարգավորված իմաստով):

Ելքային տվյալներ

Պետք է արտածել մեկ թիվ՝ խնդրի պահանջում նկարագրված քանակը:

Օրինակներ

Մուտք	Ելք
5 4	2
1 2	
2 3	
3 1	
3 4	

Գնահատում

Թեստերի 25 տոկոսում $N \leq 100$: Թեստերի մեկ այլ 25 տոկոսում $N \leq 1000$: